ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի եղբայրական հրավերով 1972 թվականի հոկտեմբերի 9-ին Մայր Աթոռ ժամանեց ղպտական ուղղափառ եկեղեցու հովվապետ, Ալեքսանդրիայի Պապ և ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ը:

Նորին Սրբությանը ուղեկցում էին Աբու Տիյգի Մարկոս սրբազան միտրոպոլիտը, Ասիուտի Միքայել սրբազան միտրոպոլիտը, Հանրային և սոցիալական սպասարկությանց բաժնի վարիչ Սամվել սրբազան եպիսկոպոսը, Բարձրագույն ուսմանց և ղպտական մշակույթի բաժնի վարիչ Գրիգորիուս սրբազան եպիսկոպոսը, Դակահլիայի Փիլիպոս սրբազան եպիսկոպոսը, դոկտ. Յուսեֆ Մանսուր Գիրգիս սարկավագը և պարոն Գիրգիս Հելմի Ազեբը, որպես թղթակից:

Հոկտեմբերի 9-ին, ժամը 14-ին, Երևանի օդանավակայանում պատվարժան հյուրերին անձամբ ողջունեց և բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ ի գլուխ Մայր Աթոռի միաբան եպիսկոպոսների, վարդապետների և ղեկավար պաշտոնեության:

Ղպտական ուղղափառ եկեղեցու Հովվապետին և Նրա շքախմբի անդամներին օդանավակայանում դիմավորեց և բարի գալուստ մաղթեց ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ մեծահարգ տիար Սարգիս Գասպարյանը:

Օդանավակայանից, երկու Հայրապետների գլխավորությամբ, պատվիրակության անդամները հանդիսավոր շքերթով ժամանեցին Մայր Աթոռ և եկեղեցական թափորով ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Մայր տաճար, ուր Իջման սուրբ սեղանի առաջ աղոթելուց հետո փոխանակեցին ողջույնի խոսքեր:

Այնուհետև Վեհարանում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն:

Հոկտեմբերի 10-ին, երեկոյան ժամը 18.30-ին, երկու Հայրապետները ներկա եղան հոգևոր ճեմարանի հանդիսասրահում Իրենց պատվին կազմակերպված ուսանողական հանդեսին:

Հետևյալ օրը, հոկտեմբերի 11-ին, ժամը 17.30-ին, երկու Հայրապետները Մայր տաճարում ներկա եղան երեկոյան պաշտամունքին և եկեղեցական

արարողության ժամանակ միասին աղոթեցին աշխարհի խաղաղության համար էկումենիկ ոգով:

Եկեղեցական արարողությունից հետո Մայր տաճարում տեղի ունեցավ հոգևոր երաժշտության համերգ՝ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ:

Այնուհետև երկու Հայրապետները առաջնորդվեցին Վեհարանի գահասրահ, ուր փոխանակվեցին պաշտոնական ճառեր և հուշանվերներ: Վերջում, ի պատիվ հյուրերի, տեղի ունեցավ 1969 թվի մյուռոնօրհնության կինոնկարի ցուցադրում:

Հոկտեմբերի 12-ին, ժամը 14-ին, Վեհարանում երկու Հայրապետների միջև տեղի ունեցավ պաշտոնական տեսակցություն ջերմ մթնոլորտում, ուր շոշափվեցին հայ և ղպտի եկեղեցիները շահագրգռող մի շարք հարցեր:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հարգարժան հյուրերի, տրվեց հրաժեշտի ճաշկերույթ:

Մայր Աթոռում գտնվելու օրերին բարձրաստիճան հյուրերը այցելեցին Մայր տաճար, նրան կից եկեղեցական արվեստի թանգարան, Հին Վեհարանի կաթողիկոսաց թանգարան, Նոր Վեհարանի պատկերասրահ և Մայր Աթոռի տպարան: Եղան ս. Գեղարդա և ս. Հռիփսիմեի վանքերում, այցելեցին հայ նահատակաց հուշարձան Ծիծեռնակաբերդում, ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմ Օշականում և դիտեցին Երևանի տեսարժան վայրերը:

Հոկտեմբերի 12-ին, ժամը 17.30-ին, ղպտական ուղղափառ եկեղեցու Հայրապետ Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքը Իր շքախմբով հրաժեշտ առավ Հայոց Հայրապետից՝ մեկնելու Բուխարեստ:

Երևանի օդանավակայանում հարգարժան հյուրերին ճանապարհեց Հայոց Հայրապետը՝ ի գլուխ Մայր Աթոռի միաբանության:

Բարձրաստիճան հյուրերին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էր եկել ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը:

Ալեքսանդրիայի Պապ և ս. Մարկոսի Աթոռի Գահակալ Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքի և Նրա շքախմբի այցելությունը Մայր Աթոռ հանդիսանում է արևելյան հին ուղղափառ եկեղեցիների եղբայրական դարավոր կապերի վառ արտահայտություն՝ էկումենիկ ոգով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

13-ը հոկտեմբերի 1972 թ.,
Ս. Էջմիածին